Պ. Թ. ԵՇԱՆՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԵՐԳԻՉԱՆՔԻ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ*

Պատմական, թե՛ բանասեր, հրապարակախոս, թե՛ ժուռնալիստ, երբ իրեն առջև խնդիր է դնում հետազոտել թե՛ երբ, ինչի համար և ինչպես են մարդիկ ծիծաղել ու հեգնել, պատմական մի որոշ շրջանում գաղափարական-հասարակական ինչ կերպարանք են ունեցել երգիծանքն ու հումորը, նշմարելի մի օրինաչափություն է նկատում։ Դրա իմաստը այն ճշմարտությունն է, որ երգիծաբանությունը, մասնավորապես երգիծական լրագրությունը, մեծապես ծաղկել ու արոտասվոր բարձրության են հասել հասարակության կյանքում տեղի ունեցած բեկումնային իրադարձությունների ու խոր ցնցումների, դասակարգային ու այլազան սոցիալական հակամարտությունների առավել սրման պահերին։

Կ. Մարքսը այստեղ ևս հանճարեղորեն տվել է այդ երևույթի խոր ընդհանրական-փիլիսոփայական բացատրությունը։ Նա դիպուկ կերպով նկատել է, որ երբ պատմությունը գերեզման է տանում կյանքի հնացած ձևը, մարդկությունն ուրախ տրամադրությամբ է բաժանվում իր անցյալից[1]։

Բաստիլիան գրոհողների հետ միասին, իր դարն ապրած ֆրանսիական ավատականության փտած բարքերին հուժկու հարվածներ են հասցրել Վոլտերի անողոք ու սպանիչ երգիծական պամֆլետները, և դրանով ոչ նվազ դեր կատարել ժամանակի հասարակական շարժման մեջ։ Հանրահայտ է այն խոշոր դերը, որ կատարում էին ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին Ժան-Պոլ Մարատի կրքոտ, հեղափոխական պաթոսով հագեցված հրաշունչ պամֆլետները, որոնք տպագրվում էին գլխավորապես նրա «Ժողովրդի բարեկամ» թերթում։ Անցյալ դարի 30-ական թվականների հեղափոխական իրադարձությունները նույն Ֆրանսիայում ծնունդ տվեցին դեմոկրատական ուղղության «La Caricature» («Կարիկատյուր» և «Le Charivari» («Շարիվարի») երգիծական պատկերազարդ թերթերին, որոնց էջերից նրանց հիմնադիր Շառլ Ֆիլիպոնը, այդ պարբերականների շուրջը համախմբված տաղանդավոր ձախ ժուռնալիստների մի մեծ խումբ, նրանց հետ միասին Օ. Բալզակը, «երգիծական պատերազմ» էին մղում հուլիսյան միապետության դեմ[2]։ Լինելով դեմոկրատական շարժման ձախ թևի մարտական-բաղաքական գենը, երգիծական այդ թերթերն իրենցով սկզբնավորեցին պարբերական մամուլի, ժամանակակից հասկացողությամբ, նոր բնագավառ, խթանելով երգիծական ժուռնալիստիկայի հետագա բուռն զարգացումը։

Ֆրանսիայի օրինակը, անտարակույս, եզակի չէ։ Իսկ Ա՞նգլիան։ Չե՛ որ Կ. Մարքսը հիացմունքով էր խոսում XIX դարակեսի անգլիական դասական

---

[1] К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. I. стр. 418.

[2] «История французской литературы», т. 2, Москва, 1956, стр. 333—348.

* *Հոդվածը՝ XX դարի սկզբի Արևելահայ քաղաքական երգիծանքի մասին հեղինակի հետազոտության ներածական մասն է։*

ռեալիստ գրողների, ավելի շատ Դիկենսի և Թեքերեյի մասին, որոնք իրենց ստեղծագործությունների մեջ հանճարեղորեն պատկերում էին կյանքի սոցիալական կողմը, կծու հեգնում «մեծամտությամբ, փքվածությամբ, մանր բռնակալությամբ ու տգիտությամբ տոգորված» բուրժուազիայի բոլոր խավերին։ «Անգլիայի վիպագիրների ժամանակակից փայլուն դպրոցի ցայտուն ու պերճախոս նկարագրություններն,— գրում էր Մարքսը,— աշխարհի առջև բացահայտեցին ավելի շատ քաղաքական ու սոցիալական ճշմարտություններ, քան այն արեցին քաղաքագետները, հրապարակախոսներն ու բարոյագետները, միասին վերցրած»[3]։

Մարքսը, բուրժուական դասակարգին դրոշմված խարանող մի էպիգրամ էր համարում այն խոսքերը, որոնք ազդարարում էին թե. «նա հաճոյակատար է իր վերաբերմունքով դեպի բարձր կանգնածները և բռնակալ է դեպի ցածր կանգնածները»։ Հայտնի է, որ այդ թևավոր դարձվածքի հեղինակը անգլիական մեծ երգիծաբան, ժուռնալիստ ու ֆելիետոնիստ, «Փառամոլության շուկան» ու «Գիրք սնոբների մասին» հռչակավոր երգիծական վեպերի ստեղծող Ուիլյամ Թեքերեյն է, որն առաջինը համաշխարհային գրականության մեջ մուծեց «Սնոբ» հասկացողությունը, և հենց միայն դա բավական էր, որ նա անմահացներ իր անունը։

Նման իրողության ենք հանդիպում նաև անցյալ դարի 60-ական թվականների Ռուսաստանում։ Հաներահայտ է ռուսական պատմության նշանավոր այդ տասնամյա հատվածը։ Ցարական Ռուսաստանի պարտությունը Ղրիմի պատերազմում, որն ամբողջ մերկությամբ ցույց տվեց ճորտատիրական կարգերի անկենսունակությունն ու մոտալուտ կործանումը, առաջ բերեց հասարակական շարժման բուռն վերելք։ Այդ վերելքի ալիքների վրա ծնվեց ու բյուրեղացավ հասարակական նոր մտածելակերպ։ Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի և Հերցենի գլխավորությամբ ձևավորվեց հեղափոխական դեմոկրատիայի գաղափարախոսությունը, որը հսկայական արձագանք գտավ ու մեծագույն ազդեցություն ունեցավ ինչպես ժամանակակիցների, նմանապես և հետագա սերունդների աշխարհայացքի ու գործելակերպի վրա։

Ահա և ռուսական երգիծական ժուռնալիստիկայի նոր, երկրորդ ծնունդը սերտորեն կապված էր երկրի պատմության բեկումնային այդ շրջանի հետ։

Վաթսունական թվականների հեղափոխական շարժման և հեղափոխական մտքի բուռն վերելքով էր պայմանավորված նաև առաջավոր դեմոկրատիայի երգիծական օրգան «Իսկրա»-ի հանդես գալը, որը հիմնադրել էին ռուսական դեմոկրատական մտավորականության փայլուն ներկայացուցիչներ Վ. Ս. Կուրոչկինը և Ն. Ա. Ստեպանովը։ Տարակուսանք չի հարուցում, և ռուս ժուռնալիստիկայի պատմաբանները միակարծիք են այն խնդրում, որ «Իսկրա»-ն հեղափոխական դեմոկրատիայի մարտական օրգանն էր, որն իր գաղափարական ուղղությամբ Չերնիշևսկու «Սովրեմեննիկ»-ի, Պիսարևի «Ռուսկոյե սլովո»-ի և Հերցենի «Կոլոկոլ»-ի ամենամերձավոր գինակիցն է եղել։

---

3 «Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը արվեստի մասին», Երևան, 1963, էջ 652—653։

4 Б. П. Козьмин, Журналистика шестидесятых годов XIX века, ВПШ, М., 1948. Г. М. Лебедева. Сатирический журнал, «Искра», Москва, 1959, И. Я. Ямпольский. Сатирическая журналистика 1860-х годов, Москва, 1964 и другие.

Պարբերական մամուլի պատմության հետազոտողը չի կարող չնկատել, որ ռուսական իրականության 60-ական թվականները հասարակական մտքի պատմության մեջ նշանավորվել են նաև այն կողմով, որ այդ շրջանում մշակվել ու ձևավորվել է որոշակի հայեցակետ դեմոկրատական, քաղաքական երգիծանքի հասարակական նշանակության ու դերի մասին։

Ռուսական հեղափոխական-դեմոկրատական մտքի կորիֆեյներից Ն. Ա. Դոբրոլյուբովը հատուկ զբաղմունքի նյութ էր դարձրել իր ապրած շրջանի երգիծական ժուռնալիստիկայի վիճակի և հեռանկարի հարցերը։ Դոբրոլյուբովը մեծագույն կրքոտությամբ նետվել էր երգիծաբանության հասարակական դերի ու նշանակության շուրջը հեղափոխական-դեմոկրատների և լիբերալների միջև ծայր առած սուր պայքարի մեջ։

Առիթն ավելի քան նպաստավոր էր։ Լիբերալ պատմաբան Ա. Աֆանասևը 1859 թ. հրապարակում է հատուկ աշխատություն Եկատերինյան շրջանի երգիծական հանդեսների մասին, որտեղ նա, Եկատերինա 2-րդի թագավորության ժամանակաշրջանը ներկայացնում է, որպես «ոսկեդար», երբ, իբրև թե, մեծ չափով ծաղկման են հասած եղել հրապարակայնությունն ու երգիծաբանությունը։

Ն. Ա. Դոբրոլյուբովն այդ առթիվ մի ընդարձակ հոդված է հրապարակում «Սովրեմեննիկ»-ում՝ «Ռուսական երգիծանքը Եկատերինայի դարում» վերտառությամբ։ Մերժելով աշխատության հեղինակի լիբերալ դատողությունները, Դոբրոլյուբովը ցույց է տալիս XVIII դարի ռուսական երգիծաբանության սահմանափակվածությունը, պնդելով, որ այն եղել է մանրախնդիր և մակերեսային, հեռու մնալով արմատական հասարակական չարիքները մերկացնելու խնդրից։ Այս եզրակացությունն ավելի քան կտրուկ է, սակայն իր ամբողջության մեջ, անտարակույս, ճշմարիտ է։

Ինչպես անցյալում, նմանապես և մեր օրերում, այն կարծիքն է հայտնվել, որ Դոբրոլյուբովը, տալով XVIII դարի ռուսական երգիծական ժուռնալիստիկայի ընդհանուր ճիշտ գնահատականը, անտեսել է, որ մանրախնդիր երգիծանքի կողքին, Եկատերինյան շրջանի երգիծական հանդեսների թվում կային նաև Ն. Ի. Նովիկովի ժուռնալները, որոնք օպոզիցիոն դիրք էին գրավում ժամանակի հասարակական ըմբռնման ծովում։ Միաժամանակ նշվել է, որ այնուհանդերձ, Դոբրոլյուբովն է, որ ամբողջ հասակով բարձրացրել է հասարակության կյանքում երգիծական գրականության նշանակության թեզը։

Չնակերպելով իր դարաշրջանի քաղաքական երգիծաբանության հիմնական խնդիրները, Դոբրոլյուբովը գտնում էր, որ երգիծանքը պարապ զվարճություն չէ, այլ կարևոր հասարակական գործ։ Դոբրոլյուբովի լուսավոր միտքը միայն կարող էր այն ընդհանրական եզրակացության գալ, որ երգիծաբանությունը ահեղ զենք է, որը կոչված է մեծ դեր խաղալու Ռուսաստանի հեղափոխական վերափոխման համար ժողովրդի արթնացման ու նախապատրաստման գործում։ Իսկ տվյալ պահին ճորտատիրություն, ժամանակի հասարակական գլխավոր չարիքը, պետք է դառնար երգիծական ընդհանրացման հիմնական առարկան։

Հասարակական կյանքի երևույթների մեծ մասը, գրում էր Դոբրոլյուբովը, պարզապես չի կարող փոխվել առանձին մարդկանց կամքով. պետք է փոխել

---

5 Н. А. Добролюбов, Собр. соч., т. 2. Москва, 1952, стр. 316—398

իրադրություններ. այլ հիմքեր ստեղծել մարդկանց գործունեության համար։ Մեր երգիծողները, շարունակում է մտորել նա, մասամբ չէին ցանկանում հասկանալ այդ. իսկ մասամբ էլ հասկանում էին, բայց չէին կարող արտահայտել։ Երգիծողները հարձակվում էին տգիտության, կաշառակերության ու կեղծ բարեպաշտության վրա. մերկացնում ապօրինություններն ու հասարակական սանդուղքի ցածրում կանգնածների նկատմամբ ամբարտավանությունն ու դաժանությունը, բարձրում կանգնածների նկատմամբ՝ ստորաքարշությունը։ Սակայն այդ մերկացումների մեջ շատ հազվադեպ էր նշմարվում այն միտքը, որ բոլոր այդ մասնակի երևույթները հասարակական անհորմալ կառուցվածքի անխուսափելի հետևանքներն են։

Սրան պետք է ավելացնել նաև Դոբրոլյուբովի այն խորաթափանց դիտողությունը, որ «ներկա ժամանակի մասին միշտ էլ դժվար է շիտակ և վճռական դատողություն անելը. ակնարկելով հասարակական առաջավոր մտքի ու երգիծանքի ճանապարհին կանգնած կաշկանդումներն ու խոչընդոտները։

Դոբրոլյուբովի միտքն ավելի հեռուն էր թռչում։ Ինչպես երևում է հոդվածից, նրան մտահոգում էր նաև երգիծաբանության ապագա կոչումը, նրա դերը նոր հասարակարգում։ Եթե շահագործման ու բռնության անարգ սյուների վրա կառուցված հին հասարակարգում առաջավոր երգիծաբանությունը, ինչպես կարծում էր Դոբրոլյուբովը, պետք է փնտրի ու մերկացնի չարիքի արմատները, այլ ոչ մասնակի երևույթները, ապա ի՞նչպիսին պետք է լինի երգիծանքի դերը այլ, նոր հիմքերի վրա ստեղծված հասարակարգում։ Նոր, սոցիալիստական հասարակարգը պատկերացնելով որպես կատարյալ, մարդկանց՝ խելացի կազմակերպված գործունեություն, Դոբրոլյուբովը գտնում էր, որ այդ հասարակարգում երգիծանքը «կմերկացնի այն մարդկանց, որոնք չեն կարողանա օգտվել նոր կառուցվածքի առավելություններից»։

Մեծ մտածողի այդ նոր, թարմ հայացքներն այնքան էին բարձրանում դարի կանոնիկ մտածողության նեղ հորիզոնից, որ անկարելի էր այն չնկատել ու անարձագանք թողնել։ Բուրժուականորեն ազատամիտ պատմագրությունը, որ ստեպ-ստեպ, իհարկե, երկյուղածությամբ ու մեծագույն զգուշավորությամբ, կառչում էր առաջավոր մտքի այս կամ այն ցոլանքին, այստեղ ևս անկարող եղավ լռությամբ անցնել։ Այդ առթիվ ուշագրավ էջերի կարելի է հանդիպել Ա. Ն. Պրպինի մոտ[6]։

* * *

Դառնալով հայկական իրականությանը, նկատում ենք, որ երգիծական ժուռնալիստիկան այստեղ, ամբողջ հայկական մտավոր կյանքի գարթոնքին զուգընթաց, ծնունդ է առնում անցյալ դարի 60—70 թվականներին։ Այն անուշտ սերտորեն կապված էր հասարակական նոր հարաբերությունների երևան գալու, ազգային գարթոնքի, հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ու գաղափարախոսության ձևավորման, թուրքական և ամեն տեսակ բռնապետության դեմ հայ ժողովրդի պայքարի նոր շրջանի հետ։

Դարաշրջանը, հայ ժողովրդի քաղաքական ու մտավոր կյանքի վերանորոգման անհրաժեշտության զգացումը, հասարակական շարժման ու հասարա-

6 А. Н. Пыпин. История русской литературы, т. 4. С.-Петербург, 1907

կական առաջավոր մտքի ընդվզման ճանապարհին դեմ կանգնած խավարամտության ու պահպանողականության դեմ թափ առած պայքարը առաջ բերին սուր խոսքի ու մտրակող ծաղրանկարի պահանջ։ Ահա պատմական այս շրջանում, արևմտահայ և արևելահայ միջավայրում, երևան է գալիս Գ. Սունդուկյանի և Հ. Պարոնյանի չկերպանցված երգիծանքը, որն իր մերկացնող ուժով ու թափով հայ ռեալիստական գրականության ու երգիծաբանության ձևավորման ու հետագա զարգացման գործում նույն մեծ դերն է կատարում, ինչպիսին կատարեցին Մոլիերի ու Թեքերեյի, Գոգոլի ու Շչեդրինի ստեղծագործություններն եվրոպական ու ռուսական իրականության մեջ։

Տարակուսել չի կարելի, որ սեփական ազգային հողի ու ավանդների վրա առաջացած հայ առաջավոր դեմոկրատական երգիծական ժուռնալիստիկան, հատկապես XIX դ., նկատելի չափով հաղորդակից է եղել ռուսական առաջավոր հասարակական մտքին, զգալիորեն հարստացել համաշխարհային կուլտուրայի լավագույն ավանդներով։ Անկասկած է նաև ռուս հեղափոխական-դեմոկրատական առաջավոր մտքի ազդեցությունը դարի հասարակական-քաղաքական մտահայեցողության վրա։ Մի փոքր շեղվելով վերհիշենք Թեկուզ Գերցեն-Նալբանդյան, Նալբանդյան-Արվաճյան զաղափարական կամուրջը։ Չնայած նրան, որ հեղափոխական-դեմոկրատական զաղափարախոսությունն ուրույն կերպով էր արձագանք գտել Հ. Արվաճյանի ինչպես մտածելակերպի, այնպես էլ գործնական քայլերի մեջ։

Այդ հանգամանքն, անշուշտ, պայմանավորված էր Արվաճյանի ապրած հասարակական միջավայրի ու հայ հասարակական շարժման յուրահատկությամբ։ Ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը գանում է, որ եթե 50-ական թվականներին Արվաճյանի «Մեղու»-ի դեմոկրատիզմը չէր հասնում հեղափոխական լարման, ապա 60-ական թվականներին Մ. Նալբանդյանից կրած ազդեցության հետևանքով, այն նոր որակ է ձեռք բերում, ստանալով հեղափոխական ուղղություն[7]։ Մենք ավելի շատ հակված ենք մտածելու, որ այստեղ ամենևին չի նույնացվում ռուսական-հեղափոխական դեմոկրատիզմն ու Արվաճյանի առաջավոր դեմոկրատական զաղափարական պլատֆորմը։

Իրավացի է, անշուշտ, գրականագետ Ա. Ասատրյանը, երբ պնդում է, որ «... Արվաճյանի մեծագույն ծառայությունը հայ գրականությանն այն է, որ նրա հիմնադրած «Մեղու»-ի էջերում, նրա իսկ գրչով սկզբնավորվում է արևմտահայ երգիծաբանությունը, որի հետագա զարգացումը կապված է Արվաճյանի անմիջական մեծ հաջորդի՝ Հակոբ Պարոնյանի անվան հետ»[8]։

Հ. Արվաճյանն իր հրապարակախոսական գործունեության ընթացքում քաջ գիտակցում էր երգիծաբանության կոչումը, երգիծական մամուլի հասարակական դերն ու նշանակությունը։ Այդ առթիվ նրա ասույթներն ու առաջադեմ մտորումները չեն կորցրել իրենց հետաքրքրությունը մեր օրերում ևս։ «Էն ավելի լուսավորյալ,— գրել է Արվաճյանը «Մեղու»-ում,— և էն քաղաքակիրթ ազգերը հատկապես ժողովրդյան և տերության վարմանց պակասությունները ծաղրելու համար լրագիրներ ունեն և այն ազգերը անանկ համոզված են և իրավամբ, թե այն լրագրերուն մեկ թերթը բարոյականի դասատու փիլիսոփայի մը մեկ հատոր գրքեն ավելի ազդեցություն և արդյունք ունի»[9]։

---

7 Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, էջ 406։
8 Ա. Ասատրյան, Հարություն Արվաճյան, Երևան, 1967, էջ 195։
9 «Մեղու», 1867, № 13, էջ 293։

Հ. Սրվանձյանի այս խոսքերի մեջ թափանցիկ կերպով ուրվագծված են նրա առաջադեմ-դեմոկրատական հայացքները, որոնք իրենց ընդհանրացման ուժով մոտենում են Դոբրոլյուբովի մտահայեցություններ։ Ի՞նչ ենք կարդում այդ տողերի մեջ։ Նախ, որ հայ երգիծական ժուռնալիստիկան, ծագելով հայկական իրականության սոցիալ-քաղաքական սեփական պատվանդանի վրա, իր մեջ է առել նաև «քաղաքակիրթ ազգերի» լավագույն ավանդները։ Այնուհետև, այստեղ հստակ, և միանգամայն ինքնուրույն կերպով, ձևակերպված է երգիծական ժանրի սոցիալական էությունը, նրա նոր պարտականությունը «ժողովրդյան և տերության վարմանց պակասությունները ծաղրելու համար»։

Դեմոկրատ մտածողն անշուշտ լավ գիտեր կատակերգության գերը հասարակության կյանքում։ Սակայն, իր ժամանակի հրատապ նշանակություն ստացած սոցիալ-քաղաքական պրոբլեմների բարձրացման ու լուծման գործում, նա գերապատվություն է տալիս երգիծական պարբերականներին, իր իսկ արտահայտությամբ, երգիծական լրագրերին, որոնց «մեկ քերթր բառոյականի դասատու փիլիսոփայի մը մեկ հատոր գրքեն ավելի ազդեցություն և արդյունք ունի», դրանով ընդգծում նաև երգիծական ժուռնալիստիկայի հասարակական ներգործության մեծ ուժը։ Եվ «Մեղու»-ում Սրվանձյանի տպագրած երգիծական նյութերը հաջողությամբ էին լուծում նրա հանձնարարականները ժողովրդի հոգևոր կյանքում երգիծական գրականության տեղի ու դերի մասին։

Հայ դեմոկրատական մամուլի, ուրեմն և առաջադեմ երգիծական ժուռնալիստիկայի, պատմությունը սկզբնավորեցին Մ. Նալբանդյանի, Գ. Սունդուկյանի, իսկ հետագայում նաև Հակոբ Պարոնյանի ստեղծագործությունները։ Մեր հայ ազգային երգիծաբանության ու երգիծական մամուլի ամբողջ հետագա պատմությունն, հասարակական կյանքի իր շոշափած հարցերով, ժանրային ու ոճական առանձնահատկություններով, մեծապես կրել է նրանց բարերար ու տիրական ազդեցությունը։ Դա ճշմարիտ է ինչպես արևմտահայ իրականության, այնպես էլ արևելահայ հատվածի մտավոր-հասարակական կյանքի համար։

Մ. Նալբանդյանի «Հիշատակարաններն» ու «Մեռելահարցուկը», Հ. Պարոնյանի «Թատրոնն» ու այլաբանական «Ծիծաղը», Գ. Սունդուկյանի — Համալի ու Հաղիդի երգիծական մանրապատումները, հայ իրականության մեջ երգիծական նոր ժանրի՝ հրապարակախոսական ֆելիետոնի, դրանց թվում նաև երգիծական պամֆլետի, ամուր հիմքերը դրեցին։

Ճիշտ է նկատել ժամանակին անվանի բանասեր ու գրականագետ Գ. Լևոնյանը, որ Մ. Նալբանդյանը եղավ «Հայ երգիծաբանության կարապետը»[10]։

Օգտվելով առիթից, պետք է նշենք, որ Գ. Սունդուկյանի ստեղծագործության նշված կողմը մինչև այժմ չի դարձել նրա գրական վաստակը հետազոտողների ուշադրության առարկան։ Իսկ, իրոք, ինչ բովանդակություն և արժեք ունեին «Մշակ»-ում և «Արձագանք»-ում տպագրված Գ. Սունդուկյանի ֆելիետոններն ու երգիծական պամֆլետները, որոնց նա «Մասլահաթներ» անունն էր տալիս։ Ի՞նչու էր հանճարեղ դրամատուրգը դիմում լրագրային այդ ժանրին։

Դժվար չէ նկատել, որ նրա այդ մասլահաթ-ֆելիետոնները սոցիալական հնչեղություն էին ձեռք բերել ժամանակի թելադրանքով։

10 «Կոռան», ժողովածու, 1911։

Թիֆլիսահայ բարբառով, սունդուկյանական համով ու հոտով գրված այդ ֆելիետոնների մեջ, մեծ երգիծողը, հավատարիմ իր սուր և անկախ գրչին, անողոք ձաղկում էր նոր, բուրժուական հարաբերությունների արատավոր կողմերը, մերկացնում անգութ շահագործող վաշխառուին, սոցիալական անարդարություններն ու դրանց հողի վրա ծագած կեղծիքն ու խաբեությունը։ Հենց իրեն, Սունդուկյանի մոտ, կարելի է հանդիպել այնպիսի տողերի, որտեղ նա ուղղակիորեն վկայում է թե ի՞նչ ուժեղ ազդեցություն էին գործում ֆելիետոնները ժամանակի կյանքի տարբեր կողմերի վրա։

Խնդիր չդնելով Գ. Սունդուկյանի հասարակական հնչեղությամբ տոգորված ֆելիետոնների հանգամանալից վերլուծությունը, որպես օրինակ կարող ենք հիշատակել նրա մասլահաթներից մեկը, որն հենց այդպես էլ, «Մասլահաթը» վերնագիրն է կրում։ Գ. Սունդուկյանն, այդ ֆելիետոնի մեջ, բալզակյան պաթոսով, իր երգիծանքի մտրակը ուժգնորեն շառաչեցնում է դրամի ավերիչ ու հասարակական բարքերն ապականող ուժի վրա։

Բուրժուական հասարակարգում մարդկանց վրա դրամի ամենազոր իշխանության նման մերկացում, ընչաղուրկ ժողովրդի նման պաշտպանություն՝ եզակի է ժամանակի հայ հրապարակախոսության մեջ։ Դժվար չէ պատկերացնել, թե հոգու ի՞նչ ալեկոծություն պետք է ապրեր Սունդուկյանի ժամանակակիցը, երբ կարդում էր մեծ երգիծողի այս ցասումնալից, ժողովրդի կեղեքիչների նկատմամբ խորն ատելությամբ լի տողերը։

«...Առանց խափիլ, առանց սուտ խոսիլ, առանց հաշա ուտիլ, առանց գոփիլ, առանց գզլիլ, առանց սուտ կուտր ննգնիլ, առանց օմքնու գլուխը եղիլ, առանց գլուխը կոացնիլ, առանց երեսպաշտությին, առանց ղալբությին ու ղալթարանդությին փուղ մոդ անիլ կո՞ւլի՞. վուր չէ ըլում, ի՞նչ անենք...

Միզ ի՞նչ թե միր արարմունքով խալխի շատ փայն նիղությենումն է, մեկի վրա հազարը քաղցած է, ծարավ է, տուն չունե, տիղ չունե, առուտեհան ինչրու մութն ու դիշերն, ինչրու լույսը վա է տալի իր գլուխը, միրն էլ հիդը... մի՞զ ինչ, մինք ինչ անինք... ջահանդամը նրանց գլուխը...»[11]։

Մեր պարտքն է վերջապես ցույց տալ, որ Գ. Սունդուկյանն իր դարաշրջանի հայ կուլտուրայի այն դեմքերից է, որոնք իրենց ստեղծագործությամբ, այդ կամեցել են նրանք թե՛-ոչ, ընդունել են թե՛-ոչ, պատկանում են հեղափոխական գրողների փայլուն սերնդին։ Այդ է օբյեկտիվ պատմական ճշմարտությունը։

Հայ երգիծարանության չգերազանցված գագաթը, սակայն, դարձավ Հ. Պարոնյանը։ Նա, անտարակույս, իր ստեղծագործական թափով ու մասշտաբներով, հասնելով համաշխարհային երգիծական մտքի բարձունքներին, գլխավորում էր իր ժամանակի դեմոկրատական հոսանքը, շարունակում էր Նալբանդյանի և Սրվանձյանի մարտական ավանդները։ Նրա ամբողջ ստեղծագործությունը շնչում է բուրժուական և ավատական կարգերի, թուրքական բռնակալության նկատմամբ մերկացնող, հզոր երգիծական պաթոսով[12]։

Այսպիսով, անցյալ դարի երկրորդ կեսի հայ սոցիալական երգիծանքն ու երգիծական ժուռնալիստիկան նշանակալից և հարուստ էջեր ունեն, որոնք կարող են առատ նյութ ընձեռել գիտական հատուկ հետազոտության համար։

---

11 Գ. Սունդուկյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1952, էջ 272—273։

12 «Հայ նոր գրականության պատմություն», Երևան, 1964, էջ 421։

* *
*

Սակայն, մեր երկրի պատմության նախորդ ոչ մի շրջան մասսայական երգիծական լրագրության այնպիսի առատություն չի բերել իր հետ, ինչպես այն բերեց ռուսական առաջին հեղափոխությունը։

Եվ դա հասկանալի է, ու տրամաբանական։

Նոր, իմպերիալիզմի դարաշրջանում, Ռուսաստանի ժողովուրդները, պայքարի նոր ձևերով ու միջոցներով առաջին գլխավոր փորձը կատարեցին ռուսական ռազմա-ֆեոդալական միապետությունը տապալելու, նրա փլատակների վրա իսկական համաժողովրդական դեմոկրատական կարգեր հաստատելու համար։ Ինքնակալության դեմ մղված համաժողովրդական այդ պայքարի պատմությունն իր շատ կողմերով հանգամանորեն հետազոտվել է մեր պատմագրության կողմից և, ռուսական առաջին հեղափոխության մասին հրապարակի վրա այնքան առատ գրականություն կա, որ հավիվ թե կարիք լինի նրա հետ ուղղակի կամ անուղղակի առնչվող այս կամ այն հասարակական շարժման կամ հասարակական մտքի ուսումնասիրությանը նվիրված հետազոտության մեջ նորից անդրադառնալ նրա բնութագրմանը։

Այդ հեղափոխության բնույթի, հասարակական շարժիչ ուժերի, նրա մեծադույն պատմական նշանակության մասին, բարեբախտաբար, ամենքի տրամադրության տակ են լենինյան անմահ գործերը։ Վ. Ի. Լենինը, հիրավի, ռուսական ազատագրական պայքարի այդ խոշորագույն դրվագի առաջին ու մեծ պատմաբանն է։

Այնուամենայնիվ, մեր հետազոտության նյութի գիտական շարադրանքը պահանջում է մշտապես աչքի առաջ ունենալ առաջին, որ իր բնույթով, իր սոցիալ-քաղաքական նպատակներով 1905 թ. հեղափոխությունը բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն էր։ Երկրորդ. հեղափոխությունը շարժման մեջ էր ներգրավել երկրի հասարակայնության բոլոր խավերին և սոցիալական տարբեր ուժեր, որ տարբեր դասակարգեր ու հասարակական պանազան խմբեր տարբեր նպատակներ ու ակնկալություններ ունեին նրանցից։ Եվ, երրորդ, այդ բոլորի հետ միասին, սոցիալական այդ տարբեր ուժերին ու քաղաքական խմբերին միավորում էր նրանց ընդհանուր ատելությունն ու ցասումը Ռոմանովյան դինաստիայի ու նրա կամարիլիայի նկատմամբ։ Ճիշտ է նկատված, որ, հետազոտելով ռուսական առաջին հեղափոխության շրջանի երգիծական մամուլը, չի կարելի ոնտեսել, որ այդ արտաքին միաբանության կողքին կային նաև ներքին խորը հակասություններ ու գործելակերպի և նպատակների բազմազանություն[13]։

Առաջավոր հասարակական միտքը, հանձինս հրապարակախոսության ու պարբերական մամուլի, գրականության ու, հատկապես, երգիծական ժուռնալիստիկայի, արտացոլելով ժամանակի ոգին, բոլոր հնարավոր միջոցներով մասնակից դարձավ ցարիզմի դեմ մղվող համաժողովրդական պայքարին։ Այժմ սուր խոսքն ու մտրակող ծաղրանկարը, հեգնանքն ու հումորը, նույնպես խարխլում էին հին կարգերի հիմքերը մարդկանց համոզմունքների ու հնամենի պատկերացումների մեջ։

---

13 «Русская сатира». Москва—Ленинград, 1960, стр. 21.

Հեղափոխական պաթոսով համակված ժողովրդական զանգվածների, ցարիզմի դեմ ոտքի ելած մարտիկի ոչ սրտին, ոչ էլ հոգուն, չէին կարող գոհացում տալ բարեհոգի հումորն ու կենցաղային երգիծանքը։ 1905 թ. հեղափոխությունը ռուսական, և ոչ միայն ռուսական, երգիծաբանությանը հաղորդեց սոցիալական ու քաղաքական շեշտված երանգ։ Սոցիալական երգիծանքը մտավ իր դերի մեջ, և հաջողությամբ էր կատարում Դոբրոլյուբովի երազած իր հասարակական պարտքը։

Վերջին տարիներին հրապարակված մի շարք աղբյուրների տվյալներով, հեղափոխության միայն առաջին և երկրորդ տարում, ինչպես սունկը գարնան թարմաշուն՝ ու կենսարեր անձրևից հետո, մեկը մյուսի ետևից Ռուսաստանում և նրա ծայրամասերում երևան եկան չորս հարյուրից ավելի երգիծական պարբերականներ[14]։ Համարձակ ու սուր, ծաղրող ու խարանող էին մամուլի այդ օրգանները։ Եվ որքան խորանում էր հեղափոխությունը, որքան ավելի նոր զանգվածներ ու երկրի նոր շրջաններ էին ընդգրկվում հեղափոխական պայքարի մեջ, այնքան ավելի էր մեծանում երգիծական պարբերականների մերկացնող պաթոսը։ Այդ տարիների ռուսական ամենահամարձակ ու ամենասուր հանդեսները, որոնք կրում էին բաղմանշանակ «Буря», «Пулемёт», «Бомбы», «Борцы», «Пули», «Девятый вал», «Свобода», «Жало» և այլ անուններ, սուր ու ցասկոտ խոսքի ամենաբազմազան միջոցներով իսկական երգիծական պատերազմ էին մղում ցարական ինքնակալության դեմ։ Երգիծողների գրիչը, ծաղրանկարիչների վրձինն ու մատիտը ոչնչացնող սարկազմով ձաղկում ու հեգնում էին Նիկոլայ 2-րդին ու արքայատան մյուս անդամներին, ցարական սատրապներ ու բարձրաստիճան պաշտոնյաներ Դուրնովոյին ու Տրեպովին, Վիտտեյին ու Ստոլիպինին, դրանց հետ միասին նաև ռեակցիայի և խավարամտության խոշորագույն գաղափարախոս Կ. Պ. Պոբեդոնոսցևին։

Վեց տասնամյակ հետո թերթելով մարտական-քաղաքական երգիծական այդ հանդեսները, ընթերցողը վերահասու է լինում այն դրամատիկական պայքարին, որ տեղի ուներ դրանց և ցարական գրաքննության միջև։ Որքան ավելի էր մոլեգնում ցարական գրաքննությունը, որքան ավելի էին հալածվում երգիծողները ու ծաղրանկարիչները, այնքան ավելի հնարամիտ էին դառնում երգիծական միջոցները։ Ռուսաստանի երգիծական մամուլը մահու ու կենաց պատերազմ էր մղում մի կողմից, երերվող ռոմանովյան գահի, մյուս կողմից, նրա երբեմնի «փառքի» պաշտպան ցարական գրաքննության դեմ։

* *
*

Ռուսական առաջին հեղափոխությունը խորն արձագանքով որոտում էր նաև Անդրկովկասում։ Այստեղ իրադարձությունները Ռուսաստանի կենտրոնական մարզերի համեմատությամբ այն առանձնահատկությունն ունեին, որ ցարիզմի դեմ ծավալված համաժողովրդական պայքարին միաձուլվել էին նաև

14 Դեռևս 20-ական թվականներին Վ. Ֆ. Բոցյանովսկին իր ուսումնասիրությանը, որն առաջին փորձն է այդ բնագավառում և համառոտ մատենագրական տեսության բնույթ ունի, կցած մատենագիտական ցուցակում 1905—1908 թթ. Ռուսաստանում լույս տեսած երգիծական պարբերականների թիվը հասցնում է 429-ի (Տե՛ս В. Ф. Боцяновский, Русская сатира первой революции 1905—1906, Ленинград, 1925).

ճնշված ազգերի ազատագրական բաղձանքները։ Քննարկելով ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական երևույթները, այդ յուրահատկությունն, անշուշտ, մշտապես պետք է աչքի առաջ ունենալ։

Այդ առթիվ մենք ունենք Վ. Ի. Լենինի ուղղակի մտքերը։ Ահա դրանք։ Խոսելով 1905 թ. հեղափոխության բնույթի, շարժիչ ուժերի և դասերի մասին, Լենինը ասում էր. «Ռուսաստանի ճնշված ժողովուրդների մեջ բռնկվեց ազգային ազատագրական շարժում։ Ռուսաստանում բնակչության կեսից ավելին, գրեթե երեք հիսգերորդականը (ճշգրիտը 57 տոկոսը) ենթարկվում են ազգային ճնշման. նրանք զուրկ են մինչև անգամ մայրենի լեզվի ազատությունից, նրանց բռնի կերպով ռուսացնում են»[15]։ Այնուհետև նա նշում է, որ հեղափոխության տարիներին ապշեցնող արագությամբ ծագեցին ազգային բնույթի բազմազան կազմակերպություններ, որոնց «...հսկայական աճման մի դարաշրջան էր դա»։

Հայտնի է նաև, որ Կովկասի իրադարձությունների մասին կուսակցության 3-րդ համագումարի համար գրած բանաձևի նախագծի մեջ[16] Վ. Ի. Լենինը, գնահատելով երկրամասի քաղաքական իրադրությունը, նշում էր, որ Կովկասի սոցիալ-քաղաքական կյանքի հատուկ պայմանների հետևանքով այնտեղ ստեղծվել են բոլշևիկյան կուսակցության ամենամարտական կազմակերպություններ։ Չափազանց ուշագրավ է նաև բանաձևի նախագծի այն մասը, ուր արձանագրված է, որ Կովկասում առկա է հեղափոխական իրադրություն, որն արդեն հասունացրել է համաժողովրդական ապստամբությունն ընդդեմ ցարական ինքնակալության։

Բարձր գնահատելով Կովկասի աշխատավորների հեղափոխական կորովը, համագումարը Ռուսաստանի գիտակից պրոլետարիատի անունից ջերմորեն ողջունում էր «Կովկասի հերոսական պրոլետարիատին և գյուղացիությանը»։

Նշված առանձնահատկություններն ուղղակի թե անուղղակի կերպով չէին կարող չարտացոլվել և արձագանք չգտնել ժամանակի պարբերական մամուլում, այդ թվում նաև երգիծական գրականության մեջ։

Կայսրության կենտրոնների հետ միասին Անդրկովկասում ևս աննախընթաց վերելք ապրեց պարբերական մամուլը։ Քաղաքական ազատ մամուլի իրավունքը նվաճվել էր պրոլետարիատի անձնուրաց և արյունահեղ պայքարի շնորհիվ։ Մամուլի ազատության համար, անշուշտ, նպաստավոր պայմաններ ստեղծեցին 1905 թ. ցարի շնորհած, թեկուզ և կիսատ, ազատությունները։ Այդ է պատճառը, որ Անդրկովկասում ևս, ինչպես լեգալ-հեղափոխական բոլշևիկյան թերթերն ու ժուռնալները, այնպես էլ դեմոկրատական ձախ մամուլը, պատկերազարդ երգիծական հանդեսները, լույս տեսան 1905 թ. վերջերին և մեծ մասամբ հաջորդ տարվա՝ 1906 թ. սկզբներին։

Այդ շրջանում, Անդրկովկասում լույս տեսած, հեղափոխական բնույթի քաղաքական երգիծանքի միակ և ամենածանրակշիռ հայերեն օրգանը հանրահայտ «Խաթաբալա» հանդեսն էր, որն իր զաղափարական-հասարակական ուղղության ու տևական, ամբողջ մի տասնամյակ (1906—1916 թթ.), գոյության շնորհիվ հատուկ տեղ է գրավում մեր դարի առաջին երկու տասնամյակի հայ պարբերական մամուլի պատմության մեջ։

---

15 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 329։
16 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 8, էջ 536—537։

«Խաթաբալա»-ն, ըստ էության, բոլշևիկյան մամուլի ամենամերձավոր զինակիցն էր և շատ հարցերում ուղղակիորեն նրա երգիծական հավելվածի դեր էր կատարում։ Արժե հիշատակել, որ «Խաթաբալա»-ի հեռ. միասին, նրան կողք-կողքի, ցարիզմի դեմ ծայր առած համաժողովրդական պայքարի մեջ, Անդրկովկասի իրականության պայմաններում, իրեն պատմական խոշոր դերն էր կատարում նաև ադրբեջաներեն հրատարակվող «Մոլլա Նասրեդդին» երգիծական ուշագրավ հանդեսը։ Այլալեզու, սակայն գաղափարակից այդ հանդեսներին միավորողը ժողովուրդների բարեկամության, ընդհանուր թշնամու դեմ միավորվելու սրբազան գաղափարն էր, որ նրանք, որպես դրոշ պարզած, առաջ էին տանում իրենց երգիծական գոտեմարտում։ Այլ կերպ անիմաստ, անհասկանալի կլիներ, մամուլի իսկական դեմոկրատական օրգանի գոյությունը։

«Մոլլա Նասրեդդինը», որը սկզբում լույս էր տեսնում Թիֆլիսում, իսկ հետագայում Բաքվում, հիմնադրել էր ադրբեջանական ականավոր դեմոկրատ-լուսավորիչ, հասարակական գործիչ ու գրող Ջալիլ Մամեդկուլիզադեն։ Հանդեսն իր էջերում լայնորեն, դեմոկրատական դիրքերից, արտացոլել է ռուսական առաջին հեղափոխության անցուդարձերը, հետևողականորեն պաշտպանել աշխատավորների շահերը և, եղել է ադրբեջանական առաջավոր մտավորականության հեղափոխական-դեմոկրատական օրգանը[17]։

Ուշագրավ է, որ այդ հանդեսի շուրջը համախմբվել էին ժամանակի ադրբեջանական առաջավոր մտավորականության լավագույն ներկայացուցիչները։ Բավական է հիշատակել, որ բացի երգիծաթերթի խմբագրից, հանդեսին աշխատակցում էին այնպիսի նշանավոր գրողներ ու ժուռնալիստներ, ինչպիսիք էին՝ ադրբեջանական ժողովրդական բանաստեղծ Մ. Սաբիրը, բանաստեղծներ Ալի Նազմին, Մ. Օրդուբադլին, գրողներ Ա. Ախվերդիևը, Ղ. Շարիֆովը, Ֆ. Քոչարլին, նկարիչներ Ա. Ազիմ-զադեն, Օ. Շմերլինգը, Գ. Բոտտերը և մյուսները։ Դրանով էր պայմանավորված այն մեծ հեղինակությունն ու ժողովրդայնությունը, որով օգտվում էր «Մոլլա Նասրեդդինը» ադրբեջանական ընթերցողների շրջանում։

«Մոլլա Նասրեդդին»-ի, որպես մարտական հեղափոխական թերթի, աչքի ընկնող արժանիքներից մեկն էլ այն էր, որ նա ցարական ինքնակալությանը, տեղական շահագործողներին, բեգերին ու աղաներին, բուրժուական նացիոնալիստներին համարձակ ու սուր քննադատելուց բացի, մեծ ուշադրություն է նվիրել նաև միջազգային բնույթի հարցերին։ Դա, անշուշտ, ժամանակի առաջադեմ և հետևողական դեմոկրատական բոլոր օրգանների համար չափազանց բնորոշ էր։ Անհամեմատ մեծ ու լայն դիապազոնով էր, օրինակ, ընդգրկում միջազգային կյանքի ամենաբազմազան հարցերը, նաև «Խաթաբալա»-ն։

Քաղաքական երգիծանքի իր սուր ծայրը «Մոլլա Նասրեդդինը» ուղղել էր իրանական և թուրքական դեսպոտիզմի, իմպերիալիզմի գաղութատիրական բաղաքականության դեմ։

Ը պատիվ ադրբեջանական պատմաբանների և բանասերների, հարկ է նշել, որ նրանք բավական հանգամանորեն ուսումնասիրել ու գնահատել են իրենց ժողովրդի հոգևոր այդ հարստություններից մեկը։ «Մոլլա Նասրեդդին» հանդեսի, նրա խմբագրի ու աշխատակիցների մասին հրապարակվել են մե-

17 М. Касумов. Боевой революционно-демократический журнал «Молла Насреддин». Баку, 1960.

նագրություններ, գրքույկներ, տասնյակ հետազոտություններ ու հոդվածներ։

«Խաթաբալա»-ի նման եզակի, բազմահարուստ պատմական ու գրական հուշարձանի մասին, նույնն ասել, ցավոք, չենք կարող։

Ի՞նչ կա, իսկապես, հրապարակի վրա։ «Խաթաբալա»-ի մասին, առայժմ, որոշ հեղինակների մոտ, միայն համառոտ ակնարկների ենք հանդիպում։ Դրանք մերթ ընդ մերթ երևում են գերազանցապես ռուսական առաջին հեղափոխության առանձին կողմերին նվիրված հետազոտությունների մեջ։ Արձանագրելով այն հանրահայտ ճշմարտությունը, որ «Խաթաբալա»-ն եղել է առաջավոր դեմոկրատական երգիծաթերթ, նրանք պարբերականի որոշ նյութերն օգտագործում են որպես պատմական արժեքավոր վավերագրեր։

Ռուսական առաջին հեղափոխությանը նվիրված իր աշխատության մեջ[18], Ծ. Աղայանը նշում է, որ հատկապես հայ-ազգբեջանական բարեկամության ամրապնդման գործում, կարևոր դեր են կատարել «Մոլլա Նասրեդդին» և «Խաթաբալա» երգիծական պարբերականները։ Հեղինակը սեղմ տողերով բնութագրում է «Խաթաբալա»-ում զետեղված երկու նկար, որոնք մերկացնում են ազգամիջյան ընդհարումների գործում ցարիզմի պրովոկացիոն քաղաքականությունը։

«Խաթաբալա»-ի, ինչպես նաև ռուսական առաջին հեղափոխության շրջանում Արևելյան Հայաստանում, չնայած կարճատև լույս տեսած, մյուս երգիծական պարբերականների մասին ուշագրավ էջեր կան Աս. Ասատրյանի աշխատության մեջ[19], որը նվիրված է այն արձագանքին, որ գտել է ռուսական ազատագրական պայքարը հայ գրականության մեջ։ Հեղինակն իր գրքում վերլուծում և արժեքավորում է երգիծական մի շարք նկարներ, ինչպես և գնահատում է նրանում տպագրված երգիծական որոշ նյութեր, սահմանափակվելով 1905—1907 թթ. շրջանակներով։

Հայ դեմոկրատական մամուլին նվիրված մեր ուսումնասիրության մեջ, վկայակոչելով ցարդ անհայտ որոշ վավերագրեր, ցույց ենք տվել այն մեծ հաջողության պատճառը, որն ունեցել է ժամանակին «Խաթաբալա»-ն։ Այստեղ հաստատապես նշվում է, որ շաբաթաթերթը հիմնադրել ու խմբագրել են Աս. Երիցյանը և Ա. Աթանասյանը, բերված են տվյալներ պարբերականի տպաքանակի վերաբերյալ և, վերջապես, մեր այդ հետազոտությանը[20] կցել ենք «Խաթաբալա»-ի երկրորդ խմբագիր և առաջատար ֆելիետոնիստ Ա. Աթանասյանի՝ երգիծաթերթում տպագրված ծածկանուն և անստորագիր ֆելիետոնների ու այլ երգիծական ակնարկների մատենագիտական ցանկը, որն առաջին փորձն է այդ բնագավառում։

Այնուհետև, երգիծական մյուս պարբերականների հետ միասին, հեղինակ Ա. Գրիգորյանը, սոցիալիստական ռեալիզմի ակունքներին նվիրված իր աշխատության մեջ[21], ուշադրության է առնում նաև «Խաթաբալա»-ն, ընդգծելով նրա նյութերի ոչ միայն տեղական, այլև ընդհանուր համառուսական նշանակությունը։

---

18 Ծ. Պ. Աղայան, Հեղափոխական շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1955, էջ 240։

19 Աս. Ասատրյան, Հայ գրականությունը և ռուսական առաջին հեղափոխությունը։ Երևան, 1956, էջ 201—233։

20 Ս. Թ. Իշխանյան, Հայ դեմոկրատական մամուլի պատմությունից, Երևան, 1962։

21 Арам Григорян, У истоков социалистического реализма, Ереван, 1963.

Ի վերջո, այդ ցանկում, առանձնանում և բացառություն է կազմում Ա. Երևանլիի՝ «Խաթարալա»-ի, չնայած և միայն մի կողմի, բայց իր բնույթով ուշագրավ ուսումնասիրությունը, որում արժեքավոր դիտողություններ կան «Խաթարալա»-ի և «Մոլլա Նասրեդդին»-ի միջև եղած սերտ գաղափարական և ստեղծագործական կապերի վերաբերյալ[22]։

Այդ հեղինակների մի մասը, ինչպես նաև գիտական շրջաններն ի սրտե ափսոսում են, որ «Խաթարալա»-ի նման հետաքրքիր և ուշագրավ պատմական վավերագիրը մինչև օրս էլ փաստորեն չի հետազոտված ու չի գնահատված նրա տեղն ու դերը հայ հասարակական մտքի պատմության մեջ։

Այսպիսով, «Խաթարալա»-ի մասին ասպարեզում եղած այդ թռուցիկ ակնարկները մի կաթիլ ջուր են հետազոտողի առաջ փռված անհատակ ու անեզր ծովում։ Իսկ հիմնական պրոբլեմները մնում են։ Մնում է գլխավորն ու էականը։ Նախ պետք է վեր հանել ու գնահատել երգիծաթերթի գաղափարական-հասարակական ուղղությունը, արժեքավորել նրանում շոշափված հասարակական-քաղաքական գլխավոր պրոբլեմները։ Շատ կարևոր է նաև բացահայտել «Խաթարալա»-ի հիմնադրման պատմությունն ու նրա առաջատար աշխատակիցների կազմը։ Վերջապես, անհրաժեշտ է ցույց տալ երգիծական այդ եղակի հուշարձանի պատմա-ճանաչողական նշանակությունը, ինչպես նաև տասնյակ այլ հարակից հարցեր։

---

22 Ա. Յու. Երևանլի, «Խաթարալա» շաբաթաթերթը Ադրբեջանի մասին, Երևանի Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու, Երևան, 1964, էջ 268—296։